**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ**

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.7/44386-2021

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՎԱՀԱՆ ՆԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Նարիբեկյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-109-06.12.2021-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2021 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N -Ա որոշումը:

**ԱՐԱՅԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Կատարող՝ Ա. Խաչանյան

Հեռ. 515656

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐՈՇԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵ-ՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Պ-109-06.12.2021-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերով առաջարկվում է՝ Հայաստանի Հանրապետության դրոշը նախադպրոցական, հանրակրթական, բարձրագույն ուսումնական հաստատությունների, գիտական մարզական և մշակութային կազմակերպությունների, պետության և համայնքի կողմից հիմնադրված այլ իրավաբանական անձանց շենքերի վրա մշտապես բարձրացնելու պահանջ ամրագրել, նոր խմբագրությամբ շարադրել դրոշի բարձրացման և իջեցման վերաբերյալ դրույթները, ինչպես նաև այդ դրույթների հիման վրա և դրանց համապատասխան պատասխանատվություն սահմանել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում:

Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացնում է հետևյալ դիտարկումներն ու առաջարկությունները.

1. «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» Հայաստանի Հանրապե-տության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝

1) վերնագրում «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառն անհրաժեշտ է փոխարինել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառով.

2) 1-ին հոդվածում «ինչպես նաև» բառերից հետո ավելացնել «պետական» բառը.

3) 1-ին հոդվածում «բառերով» բառն անհրաժեշտ է փոխարինել «բառերը» բառով.

4) 2-րդ հոդվածը հանել, քանի որ առաջարկվող փոփոխությամբ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված փոփոխության համատեքստում սահմանված չէ ով է ապահովում նշված տարածքներում դրոշի բարձրացումը, և ինչպիսի ընթացակարգերով է այն կիրարկվելու, ինչպես նաև հստակեցված չէ «հարակից

տարածքներ» հասկացությունը, իսկ առաջարկվող մյուս փոփոխությունները կարգավորվում են ներկա իրավակարգավորումներով:

2. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) 1-ին հոդվածով լրացվող օրենքի (այսուհետ՝ օրենք) 183.2-րդ հոդվածի 1-ին մասում «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1-5-րդ կամ 8-րդ մասերով, ինչպես նաև 6-րդ հոդվածով «սահմանված պահանջները» ձևակերպումն անհրաժեշտ է վերանայել և հստակ նշել այն պահանջները, որոնց խախտման համար առաջանալու է պատասխանատվություն, ինչպես նաև վերանայել «1-5-րդ» ձևակերպման գործածումը, քանի որ, ըստ էության, պատասխանատվություն պետք է առաջանա հիշատակված յուրաքանչյուր պահանջի խախտման դեպքում:

Նույն դիտողությունները վերաբերում են նաև օրենքի 183.2-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերին:

Օրենքի 183.2-րդ հոդվածի 1-ին մասում քաղաքացիների համար տուգանքի նշանակման վերաբերյալ դրույթն անհրաժեշտ է հանել, քանի որ «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1-5-րդ և 8-րդ մասերով քաղաքացիների համար նախատեսված չեն դրոշի գործածման վերաբերյալ պահանջներ:

Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվող կարգավորումն անհրաժեշտ է պարզաբանել, քանի որ նման ձևակերպման պարագայում ստացվում է, որ դրոշի գործածման պահանջների խախտման բոլոր դեպքերում ծագած վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում են միայն տեղական ինքնակառավարման մարմինները, մինչդեռ նախագծի 1-ին հոդվածով լրացվող օրենքի 183.2-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսվող պահանջների կրող կարող են հանդիսանալ նաև պետական մարմինները՝ ի դեմս համապատասխան պաշտոնատար անձանց, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպությունները, որոնց վարչական պատասխանատվության ենթարկելու իրավասությունը տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահելն անհրաժեշտ է պարզաբանել և հիմնավորել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 դեկտեմբերի N 1512-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արայիկ Խզմալյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը (Պ-109-06.12.2021-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-109-06.12.2021-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐՈՇԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի հունիսի 15-ի ՀՕ-149-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասում՝ «(այդ թվում՝ Երեւանի քաղաքապետարանի)» բառերից հետո լրացնել «,ինչպես նաեւ նախադպրոցական, հանրակրթական, բարձրագույն ուսումնական հաստատությունների, գիտական, մարզական եւ մշակութային կազմակերպությունների, պետության եւ համայնքի կողմից հիմնադրված այլ իրավաբանական անձանց» բառերով:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«*Հոդված 4. Հայաստանի Հանրապետության դրոշի բարձրացումը եւ իջեցումը*

1. Հանրապետության եւ Անկախության տոներին, ինչպես նաեւ Սահմանադրության եւ պետական խորհրդանիշների օրը Հայաստանի Հանրապետության դրոշը բարձրացվում է այն բնակելի եւ ոչ բնակելի շենքերի վրա, որոնք տեղակայված են Հայաստանի Հանրապետության համայնքների հրապարակների, փողոցների, այգիների եւ պուրակների հարակից տարածքներում:

2. Հայաստանի Հանրապետության դրոշը իջեցվում է պաշտոնապես հայտարարված սգո օրերին կամ սգո արարողությունների ժամանակ՝ մինչեւ դրոշաձողի մեջտեղը: Դրոշի վերեւի մասում ամրացվում է սեւ ժապավեն, որի երկարությունը հավասարեցվում է դրոշի երկարությանը:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում, ինչպես նաեւ պետական այլ տոներին եւ հիշատակի օրերին Հայաստանի Հանրապետության դրոշի բարձրացման եւ իջեցման փոխանցման արարողակարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 3. Սույն օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 90-րդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-109[1]-06.12.2021-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել նոր՝ 183.2 -րդ հոդվածով.

«*Հոդված 183.2. Հայաստանի Հանրապետության դրոշի գործածման պահանջները խախտելը*

1. Հայաստանի Հանրապետության դրոշի գործածման՝ «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1-5-րդ կամ 8-րդ մասերով, ինչպես նաեւ 6-րդ հոդվածով սահմանված պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների եւ իրավաբանական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հիսնապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից հարյուրապատիկի չափով:»:

2. Հայաստանի Հանրապետության դրոշի բարձրացման կամ իջեցման՝ «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով սահմանված պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից հարյուրապատիկի չափով:

3. «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության դրոշին ներկայացվող պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հիսնապատիկի չափով:

4. «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության դրոշի ընդօրինակման պահանջը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հիսնապատիկի չափով:»:

Հոդված 2. Օրենսգրքի 2191-րդ հոդվածի 2-րդ մասը «169.16-րդ» բառերից հետո լրացնել «,183.2. -րդ» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 90-րդ օրը:

Հիմնավորում

«Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» օրենքում լրացումներ կատարելու հիմնական նպատակը ամենատարածված պետական խորհրդանիշի՝ Հայաստանի Հանրապետության դրոշի առավելագույն հանրայնացումը, պետականության հանդեպ ՀՀ քաղաքացիների, հատկապես երեխաների եւ երիտասարդների մոտ հարգալից վերաբերմունքի ամրապնդումն է:

Հայաստանի Հանրապետությունում, ի տարբերություն որոշ այլ պետությունների, չի ձեւավորվել պետական դրոշի լայնամասշտաբ գործածման պրակտիկա, ինչը, ի թիվս այլնի, վկայում է պետությունից եւ նրա խորհրդանիշներից բնակչության որոշակի օտարվածության մասին, մյուս կողմից՝ պետական դրոշը մշտապես բարձրացվում է սակավաթիվ, հիմնականում հանրային իշխանության հաստատությունների շենքերի վրա, ինչը փաստում է պետական խորհրդանիշների որոշակի ձեւականացված ընկալումը;

Կարծում ենք, առաջարկվող նախագիծը Հայաստանի Հանրապետության դրոշի գործածման շրջանակների էական ընդլայնման միջոցով կնպաստի Հայաստանի Հանրապետության դրոշի ձեւական ընկալումից անցմանը դրա իրապես խորհրդանշանական բնույթի գիտակցման:

Նախագծով առաջարկվում է կրթական, գիտական, մշակութային եւ մարզական բոլոր կազմակերպությունների, ինչպես նաեւ պետության եւ համայնքի կողմից հիմնադրված բոլոր իրավաբանական անձանց համար սահմանել պետական դրոշի գործածման պարտականություն, ինչպես նաեւ առաջարկվում է օրենքի մակարդակով կանոնակարգել պետական խորհրդանիշների հետ ուղղակիորեն աղերսվող երեք տոների՝ Սահմանադրության օրվա, Հանրապետության եւ Անկախության տոների ժամանակ հանրային օգտագործման վայրերին հարող շենքերի վրա պետական դրոշի գործածման կարգը:

Նախագծերի փաթեթով լուծվում է նաեւ մեկ այլ կարեւոր հարց՝ կապված «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» օրենքի գործնական կիրարկումն ապահովելու օրենսդրական հիմքերի ձեւավորման հետ: Խնդիրն այն է, որ «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» օրենքի 10-րդ հոդվածով սահմանվում է, որ. «Սույն օրենքի պահանջների խախտումը առաջացնում է պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով:», սակայն օրենքով սահմանված պահանջների խախտման համար որեւէ օրենքով պատասխանատվություն սահմանված չէ (նշենք նաեւ, որ Քրեական օրենսգրքի 331-րդ հոդվածով սահմանված պատասխանատվությունը կապված է պետական խորհրդանիշները, այդ թվում՝ պետական դրոշն անարգելու հետ եւ չի վերաբերում «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» օրենքի պահանջների խախտմանը):

Այդ կապակցությամբ առաջարկվում է «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» օրենքի պահանջների որոշակի խախտումների համար սահմանել վարչական պատասխանատվություն:

Հաշվի առնելով օրենքն ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրոշներ ձեռք բերելու անհրաժեշտությունը, օրենքի ուժի մեջ մտնելու համար սահմանվել է եռամսյա ժամկետ: